**«Այլակրոն հայերն աշխարհում» թեմայով
խորհրդաժողովի մասնակիցներին**

Սիրելի հայրենակիցներ.

նկատի առնելով 8 սեպտեմբերի, 2016 թ., Երեւանում կայացած խորհրդաժողովի արձանագրած արդյունքները եւ ընդունած հայտարարությունը՝ առաջարկում ենք, աշխատանքները շարունակել հետեւյալ ուղղություններով.

1. Արեւմտյան Հայաստանում եւ հարակից տարածքներում, Մերձավոր եւ Միջին Արեւելքում ապրող այլակրոն հայերի վերաբերյալ տվյալների, տեղեկությունների, ուսումասիրությունների հավաքումը եւ մեկտեղումը, այլ խոսքով, այս թեմայով տվյալների բանկի ստեղծումը,
2. խնդրում ենք առաջնային համարել Արեւմտյան Հայաստանում եւ հարակից տարածքներում ապրող այլակրոն հայերի վերաբերյալ տվյալների, տեղեկությունների, ուսումասիրությունների հավաքումն ու մեկտեղումը,
3. հաջորդ կարեւոր խնդիրը՝ Արեւմտյան Հայաստանում եւ հարակից տարածքներում (այդ թվում՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքում) ապրող այլակրոն հայերի հետ կապերի հաստատման մարտավարական - աշխատանքային ծրագրերի մշակումն է:

Կարող ենք միասնական աշխատել նշյալ ուղղություններով եւ պատրաստվել ապագա խորհրդաժողովին՝ մտքերը, ծրագրերն ու մարտավարությունը տվյալ հարցերի շուրջ վերջնականապես ճշգրտելու եւ համադրելու համար:

Հարգանքներով եւ հաջողության մաղթանքներով՝

Արմենակ Հարմանդայան

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հայրենակցական, համայնքային, հայրենասիրական եւ Հավատքի հարցերի մշտական հանձնաժողովների ներկայացուցիչ

**10 հոկտեմբերի, 2016 թ.,
Փարիզ**